Արձանագրություն N 15
ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **20 հունիսի 2022թ.**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Ն. Ավետյանը, Մ. Վարդանյանը, Ս. Կարապետյանը և Ս. Միրոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:
Մասնակցում էին՝
«Մոդուլ» ՍՊԸ – Վ. Վարդանյան (լիազորված անձ),

Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի «Օրվա կարգավորման ջրավազանների կառուցման և վերակառուցման» նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Չափաբաժին 4-ի, մասով 20.06.2022 թվականի ժամը՝ 11:00-ին, գնի նվազեցման շուրջ բանակցությունների ամփոփում:

Բանակցությունների վերաբերյալ

Բանակցությունների հրավիրված նիստի ընթացքում, «Մոդուլ» ՍՊԸ-ի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվեց:

Բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից առաջարկված գին

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 4 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 47 068 806 ՀՀ դրամ/ Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում				դրամ
1	«Մոդուլ» ՍՊԸ	39 150 000	7 830 000	46 980 000

Հանձնաժողովը որոշեց

Ընտրված մասնակիցներ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին՝ 1-ին, 3-րդ Չափաբաժինների մասով և «Մոդուլ» ՍՊԸ-ին 2-րդ, 4-րդ Չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

Ընտրված մասնակիցների հետ պայմանագիրը կկնքվի օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (նիստերի դահլիճ), հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ա. Օհանյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Մ. Վարդանյան
	_____	Ս. Կարապետյան
	_____	Ս. Միրոյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան